ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաքՄարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 33

10 հունիսի 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԳՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎԴՐԱՄԱՆԻ ՊԵՄԶԱՅԻՆ ՏՈՒՖԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ «ՁՈՐ» ԿՈՉՎՈՂ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՏՈՒՖ ՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 3.6 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ «ԱՆԻ ՏՈՒՖ ՊՐՈԴՈՒԿՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 44-րդ կետի <<ը>> ենթակետի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 150-Ա հրամանով «Անի Տուֆ Պրոդուկտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (հետագայում՝ Ընկերություն) տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման 16.11.2018 թվականի N ՇԱԹ-29/589 թույլտվության, 16.11.2018 թվականի N Լ-589 լեռնհատկացման ակտի և ընդերքօգտագործման 16.11.2018 թվականի N Պ-589 պայմանագրի համաձայն թույլատրվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիպեմզա բնակավայրից 3.5 կիլոմետր հյուսիս-արևմտյան տարածքում գտնվող Ավդրամանի պեմզային տուֆերի հանքավայրի «Ձոր» կոչվող տեղամասում 50 տարի ժամկետով իրականացնել պեմզային տուֆի արդյունահանման աշխատանքներ, սակայն տվյալ հողատարածքի կադաստրային քարտեզում առկա սխալների հետևանքով, հողամասի մի մասը ընկնում է Թուրքիայի սահմանում, որը և հիմք է հանդիսանում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը մերժելու և հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը կասեցնելու համար, մինչև կադաստրային քարտեզում տեղ գտած սխալների ուղղում կատարելը (հիմք՝ Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի նախագահի 22.04.2019 թվականի N ԼՄ/3061-19 գրություն) ընկերության

պեմզային տուֆի արդյունահանման աշխատանքներ կազմակերպելու համար հնարավորություն տալու համար և հիմք ընդունելով Ընկերության 2020 թվականի փետրվարի 24-ի դիմումը.

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է</u>

1. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 150-Ա հրամանով «Անի Տուֆ Պրոդուկտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման 16.11.2018 թվականի N ՇԱԹ-29/589 թույլտվության, 16.11.2018 թվականի N Լ-589 լեռնհատկացման ակտի և ընդերքօգտագործման 16.11.2018 թվականի N Պ-589 պայմանագրի համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական տարածքում (բնակավայր՝ Բագրավան) Ավդրամանի պեմզային տուֆերի հանքավայրի «Ձոր» կոչվող տեղամասում տուֆ քարի արդյունահաման համար նախատեսված 3.6 հեկտար համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտ հողատեսքի հողամասը, մինչև տվալ հողատարածքի կադաստրային քարտեզում տեղ գտած սխալների ուղղումը և հողի նպատակային նշանակության փոփոխությունը, տուֆ քարի արդյունահանում իրականացնելու նպատակով 90000 (իննսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տարեկան վարձավճարով վարձակալության տրամադրել «Անի Տուֆ Պրոդուկտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյանին.

1) «Անի Տուֆ Պրոդուկտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (գործադիր տնօրեն՝ Անդրանիկ Բաղդասարյան) կնքել հողի վարձակալության պայմանագիր:

2) Հողատարածքի կադաստրային քարտեզում տեղ գտած սխալների ուղղումից հետո, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով նախաձեռնել գործընթաց՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքօգտագործման համար տրամադրվող հողամասերի գործառնական նշանակություն փոխադրելու և հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ենթարկելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ - 10	Դեմ՝ - 0	Ձեռնպահ՝ -0
ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՆԱԻՐԻ			
ԱՐՄԵՆՅԱՆ ԱՐՄԵՆ			
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ			
ՀՎՍԵՓՅԱՆ ԿԱՄՍԱՐ			
ՂԱՋԱՐՅԱՆ ՄԱՌԼԵՆ			
ՂԶՐՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ			
ՄԵԼԻՔՅԱՆ ԲԱԲԻԿ			
ՆԱՋԱՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ			
ՆԻԿՈՅԱՆ ԱՐՄԵՆ			
ՇԱԲՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ			
ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ			
ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱԳՈՒՆ			
ՍԱՐԳՍՅԱՆ ՋԱՎԵՆ			
ՎԱՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020 թվականի հունիսի 10

Քաղաք Մարալիկ